



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

23.12.2021թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/91

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի  
դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն՝  
Գ. Նազինյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 67.140.00230),

քննելով «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի  
կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված  
«ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի  
շրջանակներում «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 03.12.2021թ. ներկայացված (06.12.2021թ.  
վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/91 բողոք) և կից  
փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

#### **1. «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Վերիտաս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 03.12.2021թ. ներկայացված  
բողոքով հայտնել է հետևյալը.

«1. Վեճի առարկան

1.1 «ԻՋԵՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ն բժշկական սարքերի գնման նպատակով 2021թ. նոյեմբերի 28-ին հրապարակել է «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ- 21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Վերիտաս ՍՊԸ-ն հաջորդ օրը՝ նոյեմբերի 29-ին ժամը 22:02-ին armeps համակարգի միջոցով ուղարկել է պարզաբանման հարցում (տես կից ծանոցումը armeps համակարգից՝ արտատպված էլեկտրոնային փոստից):

Սույն բողոքի ներկայացման օրվա դրությամբ պատվիրատուն չի պատասխանել պարզաբանման հարցմանը:

1. 2. Հրավերի թիվ 1 չափաբաժնի (Նեյրոմիոգրաֆ EMG) տեխնիկական բնութագիրը խտրական է, ուղղորդված և չի համապատասխանում «Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին՝ «22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի»:

2. Բողոքի փաստացի և հրավական հիմքերը

2.1 «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված ՀՀ օրենքի 29 հոդվածի համաձայն՝

«Հոդված 29. Հրավերի պարզաբանումը և դրանում փոփոխություն կատարելը

1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում»:

Փաստացի սույն բողոքի ներկայացման օրվա դրությամբ պատվիրատուն չի պատասխանել պարզաբանման հարցմանը:

Մեր հարցման մեջ պատվիրատուին խնդրել էինք պարզաբանել այնպիսի հարցեր, որոնք առանցքային նշանակություն ունեին այս մրցույթին մասնակցելու կամ չմասնակցելու որոշում կայացնելու համար:

Բացի այդ, սույն բողոքը ներկայացնելու կարիք նույնպես կարող էր չառաջանալ, եթե պատվիրատուն փորձեր պարզաբանում տրամադրել մեր կողմից ուղարկված հարցերին, սակայն պատվիրատուն գերադասել է անտեսել մեր հարցումները, ինչը և դարձել է բողոքարկման հիմքերից մեկը:

2.2 Հրավերի թիվ 1 չափաբաժնի (Նեյրոմիոգրաֆ EMG) տեխնիկական բնութագիրը խտրական է և ուղղորդված, ինչի պատճառով նշված տեխնիկական բնութագրին համապատասխանում է ընդամենը մեկ արտադրող՝ չեխական Deymed ընկերության TruTrace EMG մոդելը:

Մեր ընկերության կողմից կատարվել է շուկայում հայտնի արտադրողների տեխնիկական բնութագրերի համադրում պատվիրատուի կազմած թիվ 1 չափաբաժնի բնութագրի հետ, որի արդյունքում պարզվել է, որ պատվիրատուի հրապարակած մրցույթի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագրերին ողջ աշխարհում համապատասխանում է ՄԻԱՅՆ ՄԵԿ արտադրող, որը ՀՀ-ում ունի ներկայացուցիչ: Կից արտադրողի պատասխանը՝ արտատպված էլեկտրոնային փոստից:

Մանրակրկիտ ուսումնասիրվել և հրավերի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագրերի հետ համեմատվել են հետևյալ հայտնի արտադրողների ապրանքները Natus ընկերության Dantec մոդելը, Neurosoft ընկերության ԷՄԳ սարքերի բոլոր մոդելները, Медиком ընկերության բոլոր մոդելները, Cadwell Industries և EMS արտադրողների մոդելները:

Այս մրցույթին ուղղակի անհնար է մասնակցել որևէ այլ արտադրողի սարքով, քանի որ միանշանակ հայտը մերժվելու է տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության հիմքով, ինչն էլ ցանկացել է ապահովել պատվիրատուն:

Փաստացի մրցույթը կրում է ձևական բնույթ, քանի որ որևէ մրցակցության մասին խոսք գնալ չի կարող:

Պնդում ենք, որ պատվիրատուն չի կարող ներկայացնել բողոք քննող անձին ողջ աշխարհում գեթ մեկ արտադրող, ում ապրանքը կհամապատասխանի հրապարակված ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի բոլոր կետերի հետ:

Որպես հավելյալ ապացույց առ այն, որ հրավերի բնութագիրը արտագրված է կոնկրետ մեկ արտադրողի ապրանքի տվյալներից, կից ներկայացնում ենք սարքի ձեռնարկը, որը համադրելով պատվիրատուի հրապարակած ընթացակարգի հրավերի բնութագրերի հետ, կարելի է հեշտությամբ համոզվել, որ պատվիրատուն արտագրել է հենց այդ ձեռնարկից:

Որպես վառ օրինակ կարող ենք բերել պատվիրատուի պահանջած հետևյալ ցուցանիշը՝ «Անալոգային ժամանակի հաստատունը՝ ոչ ավելի քան 3.2, 0.32, 0,02»: Պարզաբանման համար պատվիրատուին ուղարկված հարցերից մեկն էլ հենց այդ ցուցանիշին էր վերաբերվում, դրա ընտրության հիմնավորվածությանը, սակայն ինչպես

արդեն նշել ենք, պատվիրատուն գերադասել է չպատասխանել պատշաճ կերպով կատարված հարցմանը: Պատվիրատուն ընդամենը մեկ երկու պարամետրի համար ավելի լայն միջակայք է սահմանել, քան գրված է ձեռնարկում և դրանով ցանկացել է տպավորություն ստեղծել, որ ոչ ամբողջն է արտագրված, սակայն փաստը մնում է այն, որ բնութագրում ուղղորդող, որոշիչ դեր խաղացող պահանջները մնացել են անփոփոխ՝ զրկելով որևէ արտադրողի գնային առաջարկ ներկայացնելու ու մրցակցելու հնարավորությունից:

Այսպիսով, չեն պահպանվել «Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջները:

### 3. Բողոքի պահանջը

1. Չկայացած հայտարարել «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով մրցույթի թիվ 1 չափաբաժինը:

2. Պարտավորեցնել պատվիրատուին համապատասխանեցնել մրցույթի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը «Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.12.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

## **2. «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

«Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքների քննող անձին ուղղված 07.12.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան նշված բողոքի վեճի առարկա հանդիսացող 1.1 կետի տեղեկացնում ենք, որ պարզաբանումը անմիջապես ուղարկվել է պարզաբանման հասցեատու հանդիսացող «Վիրիտաս» ՍՊԸ-ի էլ. փոստի հասցեին: Որպես ապացույց կից ներկայացվում է Իջևանի ԱԱՊԿ պաշտոնական էլ. փոստից «Վերիտաս» ՍՊԸ էլ. փոստին ուղարկված նամակի նկարը, որտեղ երևում է ուղարկված նամակի ժամը և ամսաթիվը:

Նշված նամակում մանրամասն ներկայացվում են հիմանվորված պարզաբանումները: Կից կրկին ուղարկում ենք նշված պարզաբանման տեքստը:

Ի պատասխան նշված բողոքի վեճի առարկա հանդիսացող 1.2 կետի տեղեկացնում ենք, որ հիմնվելով նախորդ առ ՀՀ գնումների հետ կապված բողոքների քննող անձի բողոքարկման արդյունքներից կատարվել է տեխնիկական բնութագրի ամբողջական վերանայում, որի արդյունքում ուղղորդված լինելու, մեկ արտադրողին համապատասխանող լինելու անհիմն մեղադրանքները փարատելու նպատակով՝

1. Լրիվ կրճատվել են տեխնիկական նկարագրություն պարունակող պահանջները:

2. Հեռացվել են թվային կամ որևիցե սահմանափակող ցուցանիշներ:

3. Հստակորեն նկարագրվել են սարքի հիմնական պահանջները, որի արդյունքում պահանջվում է սարք, որը նշված տարածքում կարող է ապահովել ուժեղ և կայուն ազդանշան, շարժական սարքին բնորոշ և վստահելի հենք և այլն.

4. Շեշտադրումը եղել է հետագա սերվիսային սպասարկման ապահովումը

Արդյունքում ստորև ներկայացվում է համեմատականը նախորդ տեխնիկական բնութագրի և ներկա բնութագրի միջև:

**ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ**

Նոր մրցույթային հայտի տեխնիկական բնութագիր	Նախորդ մրցույթային հայտի տեխնիկական բնութագիր
<p>Նյարդամէլեկտրոմիոգրաֆիկ համակարգ, որը պետք է ապահովի առնվազն 5 ժամ անխափան մարտկոցով աշխատանք, լինի լիարժեք ֆունկցիոնալությամբ թեթև, դյուրակիր, և շարժական : Նեյրոֆիզիոլոգիական համակարգը պետք է լինի առնվազն 8 կանալով, ունենա առնվազն 8 ալիքային էլեկտրոմիոգրաֆիկ սաղավարտ: Պետք է առկա լինեն USB ադապտորի և բարձրախոսի առկայություն:</p> <p>Պետք է ունենա էլեկտրական խթանիչ և աուդիո խթանիչ, որոնց ինտենսիվությունը և հաճախականությունները պետք է ապահովվեն մաքուր ազդանշանի ստացումը գործունեության հասցեներում, սակայն հաճախականությունը էլեկտրական խթանիչի համար պետք է լինի ոչ ավել, քան 300Հց, իսկ աուդիո խթանիչի համար ոչ ավել,</p>	<p>էլեկտրոմիոգրաֆիկ համակարգ, որը պետք է աշխատի մարտկոցով, լինի դյուրակիր և շարժական՝ ապահովելով նյարդային հաղորդունակությունբարձր զգայունությունը:</p> <p>Լրակազմը պետք է ունենա՝</p> <p>8 ալիքային էլեկտրոմիոգրաֆիկ սաղավարտ, համակարգիպաշտոնական լիցենզիա և լրակազմի 2 տարվա երաշխիք</p> <p>EMG- ի շարժական բազային միավոր, ներառյալ ներկառուցված EMG ստեղնաշար, USB ադապտեր և բարձրախոս:</p> <p>EMG- ի սաղավարտի միացում և փոխանակվող խթանիչ:</p> <p>Հիվանդների տվյալների պահոց, հաշվետվություններ և ծրագրային ապահովման հարթակի վերանայում (անհրաժեշտ է համակարգի</p>

<p>քան 250Հգ: Աուդիո խթանիչի առավելագույն ինտենսիվությունը՝ 132 դԲ.</p> <p>Պետք է ունենա ներկառուցված գրադարան, ներքին պահոց, հաշվետվության դյուրին և հեշտ ընկալելի ծրագրեր, առանձին նեյրոմիոգրաֆիկ ստեղնաշար:</p> <p>Ունենա ծրագրային հետևյալ մոդուլները՝ շարժական և զգացողական նյարդերի հաղորդականության ստուգում, F-ալիք, H-ռեֆլեքս, Մակրո-էՄԳ, կրկնվող ստիմուլացիա, թարթման ռեֆլեքս, ավտոմատ Multi MUP, մեխանիկական MUP:</p> <p>Սարքը տեխնիկապես պետք է ապահովի տեղանքի ցանկացած արտաքին ազդակներից առաջացած աղմուկների և արտեֆակտների ամբողջական ֆիլտրում, որի արդյունքում ստացված ազդանշանը պետք է լինի մաքուր և անաղմուկ:</p> <p>Անալոգային ժամանակի հաստատունը՝ ոչ ավելի քան 3.2, 0.32, 0,02:</p> <p>Անալոգային նմուշառման հաստատունը՝ առնվազն 50 կՀց յուրաքանչյուր կանալի համար:</p> <p>Մուտքային դիֆերենցիալ դիմադրությունը՝ ոչ պակաս, քան 200 Մեգաօհմ:</p> <p>Սարքը պետք է համալրված լինի դյուրակիր համակարգչով առնվազն i5 10 սերնդի պրոցեսորով, մեծ անշողք 40 սանտիմետր անյունագծով</p> <p>Սարքի երաշխիքային սպասարկումը՝ 12 ամիս</p> <p>Որակի հավաստագրերի առկայություն՝ Сертификат Соответствия, FDA, CE կամ համարժեք</p> <p>Համակարգի տեղադրում, ուսուցում</p> <p>Մասնակիցը պետք է ներկայացնի սերվիսային մասնագետի ինժեների կամ բարձրագույն տեխնիկական որոկավորման հավաստագրերը, նյարդամէլեկտրոմիոգրաֆիկ համակարգի վրա նշված մասնագետի վերապատրաստումը անցնելու գործարանային գրությունը</p>	<p>համար):</p> <p>Ծրագրային ապահովման մոդուլներ և լիցենզիաներ MNC, SNC, F-Wave, H and Blink Reflex, Repetitive, EMG, MUP, T/A Analysis համար:</p> <p>SEP էլեկտրական խթանիչ:</p> <p>Հիմնական պարագաներ՝ (1x) բար էլեկտրոդի խթանիչ, (1x) հողանցման սկավառակ, (1x) սկավառակային հողանցման էլեկտրոդ, (1x) 12 մեկանգամյա օգտագործման մակերեսային էլեկտրոդ, (1x) մակերեսային էլեկտրոդի մալուխ, (6x) մեկանգամյա օգտագործման ասեղ, (1x) Ասեղի էլեկտրոդի մալուխի ամրակ:</p> <p>Մարտկոցով լիարժեք աշխատող և խելացի լիցքավորիչ՝ ազդանշանի բացառիկ որակ ապահովելու համար:</p> <p>Դյուրին գրատաղտակին նմանվող ինտերֆեյս:</p> <p>Էրգոնոմիկ և լիարժեք գործառույթ ունեցող ստեղնաշար՝ օգտագործման հարմարավետության համար:</p> <p>Ազդանշանների ձայնագրությունների պահպանում, վերարտադրում և դիտում:</p> <p>Անհատական ամփոփ հաշվետվություններ MS Word ֆայլի տեսքով:</p> <p>Իմպեդանսի արագ ստուգում ցանկացած հետազոտման ընթացքում:</p> <p>GDT, HL7 և ցանցային ֆունկցիաների հնարավորություն:</p> <p>Մեկից ավելի օգտատիրոջ գրանցելու հնարավորություն՝ յուրաքանչյուրին համապատասխան կարգավորումների շնորհիվ:</p> <p>Տվյալների անցանց վերանայում՝ պարամետրերի խմբագրման հնարավորությամբ:</p> <p>Անսահմանափակ բուֆերային պահեստավորում Live EMG-ի համար:</p> <p>Ծրագիրը պետք է ներառի հետևյալ մոդուլները՝</p> <p>MNC, SNC, F-ալիք, H-ռեֆլեքս, դյույմ,</p>
--	--

կրկնվող ստիմուլացիա, թարթող ռեֆլեքս, EMG  
ասեղ, Ուիլսոն և T / A վերլուծություն, ավտոմատ  
Multi MUP, մեխանիկական MUP, հիվանդների  
տվյալների պահոց, օգտագործողի  
հաշվետվությունների օրինակներ:

Ծրագիրը պետք է ունենա հետևյալ  
հավելյալ մոդուլների հնարավորություն՝ Voluntary  
Single Fiber, Stimulated Single Fiber, Fiber Density,  
R-R Interval / Valsava, SSR, Macro EMG, SEP,  
AEP/BAEP, VEP, P300, MEP, MUNIX:

Անալոգային ժամանակի հաստատունը  
պետք է լինի ոչ պակաս քան 3.2, 0.32, 0,02:

Անալոգային նմուշառման հաստատունը  
պետք է լինի ոչ պակաս քան՝ 50 կՀց յուրաքանչյուր  
կանալի համար:

Մուտքային դիֆերենցիալ դիմադրությունը՝  
ոչ պակաս քան 10 GΩ զուգահեռ 25 pF:

Աուդիո խթանիչ

Առավելագույն ինտենսիվությունը՝ ոչ ավել  
քան 132 դԲ SPL:

Խթանման քայլեր՝ ոչ ավել քան 1 դԲ:

Խթանման տեսակ՝ ոչ պակաս քան  
սեղմում, բռնկում, տոնայնություն կամ  
ծրագրավորվող:

Բևեռականություն՝ նոսրացում, խտացում,  
այլընտրանք:

Խթանման տևողություն՝ ոչ ավել քան 50μs  
80ms-ի:

Խթանման առավելագույն  
հաճախականությունը՝ ոչ ավել քան 250Հց:

Էլեկտրական խթանիչ

Խթանման ինտենսիվություն՝ ոչ պակաս  
քան 100μԱ- 100մԱ:

Բևեռականություն՝ դրական, բացասական,  
փոփոխական, բի-ֆազային:

Իմպուլսի տևողություն՝ ոչ պակաս քան 50  
μs 1ms-ի:

	<p>Խթանման առավելագույն հաճախականությունը՝ ոչ ավել քան 300Հց:</p> <p>Սարքը պետք է համալրած լինի հզոր դյուրակիր համակարգչով՝ առնվազն 470 տակտային հաճախականությամբ G7 17,3"FHD մոնիտորով i5-10210U պրոցեսորով / 8 / 512 / DVD / AMD530 / W10 / 8MH45EA</p> <p>Համակարգի համար պետք է տրամադրվի երաշխիք –12 ամիս</p> <p>Համակարգը պետք է տեղադրվի, տրամադրվի ուսուցում</p> <p>Ամբողջ համակարգի համար FDA, CE, ISO 9001 կամ համարժեք որակի սերտիֆիկատների առկայություն</p>
--	---

Ակնհայտ է, ի հեճուկս մեր տեխնիկական բնութագրի վերանայմանը, որի արդյունքում ակնհայտ է մեր ցանկությունը ապահովել մասնակիցների թափանցիկ և պարզ ընթացքը, որ բողոքարկող կողմը ունի նպատակասլաց և ագրեսիվ միտումներ տապալել գնման գործընթացը և զրկել Իջևանի ԱԱՊԿ-ին ֆինանսական տնտեսած միջոցների հաշվին ներդրմի գրաֆիկ սարքի ձեռքբերմանը, եթե այն չի կարող կատարվել հենց Վերիտաս ՍՊԸ կողմից:

Համաձայն բողոքարկող կողմի 2-րդ կետի 2.1 և 2.2 կետերին (ԲՈՂՈՔԻ ՓԱՍՏԱՑԻ և ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ) կրկին հղում ենք կատարում առ այն, որ տեքստում նշված պարզաբանման պահանջը բավարարվել է՝ ուղարկվելով հիմնավոր և մանրակրկիտ պարզաբանում՝ ուղարկելով այն Վերիտաս ՍՊԸ էլ. փոստի հասցեին (արտատպումը կցված է, պարզաբանումը՝ ևս):

Հավելյալ նաև աղյուսակով ստորև ներկայացնում ենք տեխնիկական բնութագրի համեմատականները ուրիշ արտադրող ընկերությունների բնութագրերի հետ, որտեղ հստակ երևում է, որ պահպանված են ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջը:

Կից ներկայացվում է՝

1. Համեմատական աղյուսակ N1



2. Համեմատական աղյուսակում նշված ընկերությունների արտադրողների ձեռնարկները:

3. Պարզաբանման պատասխանը, որը ուղարկվել է ս.թ. դեկտեմբերի 2-ին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.12.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ վկայակոչված փաստերը:

### **3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/91 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲՔԱ-ՆԳ-2021/91 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, հաստատվել է գնման առարկայի՝ «Նեյրոմիոգրաֆ EMG» տեխնիկական բնութագիրը:

3. «Վերիտաս» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 չափաբաժնի (Նեյրոմիոգրաֆ EMG) տեխնիկական բնութագիրը խտրական է և ուղղորդված, ինչի պատճառով նշված տեխնիկական բնութագրին համապատասխանում է ընդամենը մեկ արտադրող՝ չեխական Deymed ընկերության TruTrace EMG մոդելը:

4. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի բազմակողմանի և օբյեկտիվ քննությամբ պայմանավորված՝ 09.12.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/20295-2021 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ կից ներկայացնելով Պատվիրատուի կողմից 07.12.2021թ. գրությամբ տրամադրված համեմատական աղյուսակը և հայտնելով հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 17-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող

հարցերի պարզաբանման նպատակով Անձը կարող է նշանակել փորձաքննություն կամ **դիմել տվյալ բնագավառը կարգավորող պետական մարմիններին՝ դիրքորոշում ստանալու համար:**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող գործի քննությամբ պայմանավորված՝ խնդրում եմ հանձնարարել համապատասխան մարմին տալու մասնագիտական կարծիք հետևյալի վերաբերյալ.

Արդյո՞ք կից ներկայացված համեմատական աղյուսակում ներառված «Նեյրոմիոգրաֆ EMG» բժշկական սարքի ձեռքբերման համար սահմանված հատկանիշները բավարարում են նույն աղյուսակում նշված տարբեր մակնիշներին»:

5. Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 16.12.2021թ. թիվ ՎԳ/06.3/27525-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 2021 թվականի դեկտեմբերի 9-ի Ձեր թիվ ԲԲԱ-ԳՆ/20295-2021 գրության՝ «Նեյրոմիոգրաֆ EMG» բժշկական սարքի տեխնիկական բնութագրի վերաբերյալ, հայտնում եմ հետևյալը:

Առողջապահության նախարարության բժշկական սարքավորումների մասնագետի կողմից իրականացվել է Ձեր կողմից ներկայացված բժշկական սարքերի տեխնիկական տվյալների համեմատություն, որի արդյունքում պարզվել է, որ մրցույթային տեխնիկական բնութագրին համապատասխանում է միայն մեկ սարքավորում՝ Deymed Diagnostik ընկերության կողմից արտադրվող Tru Trace մոդելի նեյրոմիոգրաֆը: Հիմնական անհամապատասխանելիությունն «Անալոգային ժամանակի հաստատունը՝ ոչ ավելի քան 3.2, 0.32, 0.002» պայմանն է, որը համապատասխանում է միայն Tru Trace մոդելի նեյրոմիոգրաֆին»:

#### **4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վերիտաս» ՍՊԸ-ի 03.12.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի 07.12.2021թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, ՀՀ առողջապահության նախարարության 16.12.2021թ. թիվ ՎԳ/06.3/27525-2021 գրությունը, Ընթացակարգի հրավերը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպես, «Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, հաստատվել է գնման առարկայի՝ հետևյալ տեխնիկական բնութագիրը:

անվանումը	տեխնիկական բնութագիրը
«Նեյրոմիոգրաֆ EMG»	<p>յարդամէլեկտրոմիոգրաֆիկ համակարգ, որը պետք է ապահովի առնվազն 5 ժամ անխափան մարտկոցով աշխատանք, լինի լիարժեք ֆունկցիոնալությամբ թեթև, դյուրակիր, և շարժական : Նեյրոֆիզիոլոգիական համակարգը պետք է լինի առնվազն 8 կանալով, ունենա առնվազն 8 ալիքային էլեկտրոմիոգրաֆիկ սաղավարտ: Պետք է առկա լինեն USB ադապտորի և բարձրախոսի առկայություն:</p> <p>Պետք է ունենա էլեկտրական խթանիչ և աուդիո խթանիչ, որոնց ինտենսիվությունը և հաճախականությունները պետք է ապահովվեն մաքուր ազդանշանի ստացումը գործունեության հասցեներում, սակայն հաճախականությունը էլեկտրական խթանիչի համար պետք է լինի ոչ ավել, քան 300Հց, իսկ աուդիո խթանիչի համար ոչ ավել, քան 250Հց: Աուդիո խթանիչի առավելագույն ինտենսիվությունը՝ 132 դԲ.</p> <p>Պետք է ունենա ներկառուցված գրադարան, ներքին պահոց, հաշվետվության դյուրին և հեշտ ընկալելի ծրագրեր, առանձին նեյրոմիոգրաֆիկ ստեղնաշար:</p> <p>Ունենա ծրագրային հետևյալ մոդուլները՝ շարժական և զգացողական նյարդերի հաղորդականության ստուգում, F-ալիք, H-ռեֆլեքս, Մակրո-էՄԳ, կրկնվող ստիմուլացիա, թարթման ռեֆլեքս, ավտոմատ Multi MUP, մեխանիկական MUP:</p> <p>Սարքը տեխնիկապես պետք է ապահովի տեղանքի ցանկացած արտաքին ազդակներից առաջացած աղմուկների և արտեֆակտների ամբողջական ֆիլտրում, որի արդյունքում</p>

	<p>ստացված ազդանշանը պետք է լինի մաքուր և անաղմուկ:  Անալոգային ժամանակի հաստատունը՝ ոչ ավելի քան 3.2, 0.32, 0,02:  Անալոգային նմուշառման հաստատունը՝ առնվազն 50 կՀց յուրաքանչյուր կանալի համար:  Մուտքային դիֆերենցիալ դիմադրությունը՝ ոչ պակաս, քան 200 Մեգաօհմ:  Սարքը պետք է համալրված լինի դյուրակիր համակարգչով առնվազն i5 10 սերնդի պրոցեսորով, մեծ անշողք 40 սանտիմետր անյունագծով  Սարքի երաշխիքային սպասարկումը՝ 12 ամիս  Որակի հավաստագրերի առկայություն՝ Сертификат Соответствия, FDA, CE կամ համարժեք Համակարգի տեղադրում, ուսուցում  Մասնակիցը պետք է ներկայացնի սերվիսային մասնագետի ինժեների կամ բարձրագույն տեխնիկական որակավորման հավաստագրերը, նյարդամեխտրոմիոգրաֆիկ համակարգի վրա նշված մասնագետի վերապատրաստումը անցնելու գործարանային գրությունը</p>
--	--

«Վերիտաս» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով մասնավորապես վիճարկում է այն փաստը, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 չափաբաժնի (Նեյրոմիոգրաֆ EMG) տեխնիկական բնութագիրը խտրական է և ուղղորդված, ինչի պատճառով նշված տեխնիկական բնութագրին համապատասխանում է ընդամենը մեկ արտադրող՝ չեխական Deymed ընկերության TruTrace EMG մոդելը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի բազմակողմանի և օբյեկտիվ քննությամբ պայմանավորված՝ 09.12.2021թ. թիվ /ԲԲԱ-ԳՆ/20295-2021 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ կից ներկայացնելով Պատվիրատուի կողմից 07.12.2021թ. գրությամբ տրամադրված համեմատական աղյուսակը և հայտնելով հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 17-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով Անձը կարող է նշանակել փորձաքննություն կամ **դիմել տվյալ բնագավառը կարգավորող պետական մարմիններին՝ դիրքորոշում ստանալու համար:**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող գործի քննությամբ պայմանավորված՝ խնդրում եմ հանձնարարել համապատասխան մարմնին տալու մասնագիտական կարծիք հետևյալի վերաբերյալ.

**Արդյո՞ք կից ներկայացված համեմատական աղյուսակում ներառված «Նեյրոմիոգրաֆ EMG» բժշկական սարքի ձեռքբերման համար սահմանված հարկանիշները բավարարում են նույն աղյուսակում նշված փարբեր մակնիշներին»:**

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 16.12.2021թ. թիվ ՎԳ/06.3/27525-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 2021 թվականի դեկտեմբերի 9-ի Ձեր թիվ ԲՔԱ-ԳՆ/20295-2021 գրության՝ «Նեյրոմիոգրաֆ EMG» բժշկական սարքի տեխնիկական բնութագրի վերաբերյալ, հայտնում եմ հետևյալը:

***Առողջապահության նախարարության բժշկական սարքավորումների մասնագետի կողմից իրականացվել է Ձեր կողմից ներկայացված բժշկական սարքերի տեխնիկական տվյալների համեմատություն, որի արդյունքում պարզվել է, որ մրցույթային տեխնիկական բնութագրին համապատասխանում է միայն մեկ սարքավորում՝ Deymed Diagnostik ընկերության կողմից արտադրվող Tru Trace մոդելի նեյրոմիոգրաֆը: Հիմնական անհամապատասխանելիությունն «Անալոգային ժամանակի հաստատումը՝ ոչ ավելի քան 3.2, 0.32, 0.002» պայմանն է, որը համապատասխանում է միայն Tru Trace մոդելի նեյրոմիոգրաֆին»:***

Այսպիսով՝ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից բողոքով վիճարկվող փաստական հանգամանքը համադրելով կիրառման ենթակա նորմի հետ և հիմք ընդունելով տվյալ բնագավառը կարգավորող պետական մարմնի՝ ՀՀ առողջապահության նախարարության հարցման պատասխանը՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը հակասում է Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջին:

Ինչ վերաբերում է բողոքով ներկայացված հետևյալ պահանջին՝ *պարտավորեցնել պարտավորություն համապատասխանեցնել մրցույթի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը «Գնումների գործընթացների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին*, հայտնում եմ, որ բողոքի քննության արդյունքում Ընթացակարգը չկայացած հայտարարելու պայմաններում վկայակոչված պահանջը դառնում է առարկայազուրկ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## **Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 03.12.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած

հայտարարել «ԻԱԱՊԿ-ԳՀ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

2. Բողոքի պահանջը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված  
բողոքներ քննող անձ՝**



**ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**